բեանց՝ ոչ պահելով զիրեալսդ մեր ամն բաղումն 'ի պարծանս Աղգիս և 'ի շինութիւն Սրբոյ Գահոյս, 'ի ցնծութիւն սրտից մերոց. ամէն։

Գրեցաւ Նեղութեան և յորդորանաց գիրս 'ի վանքաղաղդ Մայրաքաղաքս սուրբ Երուսաղեմ, 'ի տիրահաստատ Սուրբ Աթոռս ամենայն Հայոց. 'ի ՌՄԾԲ մերս Հայկազեան թուին, յՕգոստոսի սկիզբն։

Սրբոյ Երուսաղեմի յեպիսկոպոսեայ.
Նուիրակ Զուէ Յոյոբ Աբեղայ։

---

## ՀՐՈՎԱՐՏԱԿ ԱԼԻԻ

Հետեւեալ հրովարտակն եւս, զոր Ամիրապետն Ալի տուած է Հայոց Աղգին, և դարձեալ օրինակուած է 'ի Հնդկաստան, արժան կը համարիմք հրատարակել։

Յանուն Աստուծոյ Բարերարին և Գթածի.
Յորմէ հայցեմք զօգնութիւն։

Գոհացողական փառաւորութիւն Արարողին տիեզերաց և յարգական խաղաղութիւն մեծի պետին և բարեբարոյին Մահմետի ընդ նմին և Սրբազան տոհմի նորա։

Յետ այսր ամենայնի. այս է բան թարգմանութեան ուխտին, զոր գրեաց Հաշամ որդի Աթապա որդի Վաղասայ ըստ հրամանի երանելի պետին արեաց և Աստուածային առաքնուն սրբոյն սրբոց՝ Ալի որդւոյն Ասպիթալեպայ փառաւորելոյն Քուֆի գրով 'ի հռչակաւոր վանս Թարաւթալայ գերապանծ բնակարանին յամենաընդն սոփար, 'ի քառասներորդ ամի հիճրեթի։

Քանզի յԱղգէն Հայոց արք ոմանք երեւելիք. խմաստուն և նշանաւորք, որ են Յակոբ Սէիդ Աբդշուխ և որդին Սահանայ և Աբրահամ քահանայն, Եապի եպիսկոպոսն և այլք բազումք մինչեւ քառասուն անձինք խօսակից եղեն ընդ իս և առաջիկայ գտան այսմ ուխտադրութեան և ժառանգին յինէն առնել զայն, որք և առնէին բարերարութիւն և այցելութիւն գործակալին մերոյ, զոր առաքեալ էաք 'ի վերայ բերդորէից և 'ի սահմանագլուխս. այն եղեւ պատճառ խօսակցութեան մերոյ ընդ նոսա եւ ուխտադրութեան. վասն այնորիկ եդի ուխտ ընդ նոսա 'ի կողմանէ իմմէ եւ 'ի կողմանէ ամենայն ազգաց Իսլամայ յարեւելից մինչեւ յարեւմուտս. առայս՝ զի ըստ ճշմարտութեան նորա ընդ խնամօք և հոգանաւորութեամբ իմով են, ցորքան ես կենդանի իցեմ. և յետ մահուան իմոյ ցորքան կրօնն Իսլամի հաստատուն կացցէ. և քրիստոնէական քարոզութիւնն տեւիցէ, հարկ է ամենայն թագաւորաց և իշխանաց և այլոց ամենեցուն լսացուցանել Աստուծով զուխտս մեր. ցորքան ժամանակ ծոմն թանալ կարիցէ ըզբուրգս և զսուիս. և յերկինից անձրեւ տեղասցի, և յերկրէ խոտ բուսանիցի և ասատեղք լայս տացեն. և աւաւօտն ծագեսցի 'ի վերայ հիւրից և օտարականաց. և ոչ ոք իշխեսցէ զայս ուխտ իմ գրժել և փոխարկել, առանց յաւելլոյ և նուազելոյ կամ այլայլելոյ. վասն զի որ յաւելուն՝ առաւելու զպատիժ իւր և նուազեցուցանէ զհամբերութիւնս մեր. և ինքն և այլայլողն այսմ ուխտի համարելի է հնարագէտ ներգող այնց՝ զոր ես ետու նոցա. և

digitised by A.R.A.R.@

կցորդ լինի ընդ անհաւատարիմն իմ. և ճշմարտապէս կործանէ զուխտն Աստուածային. և լինի պատճառ զայրացման միայնոյն Աստուծոյ։ Քանզի բաւական է վկայութիւն Սէյիտ եպիսկոպոսին և այլոց բազմաց. որոց անուանքն 'ի վերս անդր գրեցան։ Քանզի գլխաւորքն քրիստոնէից խնդրեցին յինէն հաստատել ուխտ և դաշն 'ի մէջ ամենայն քրիստոնէից. որք ընդ հովանեաւ Մուսլիմանաց զետեղեալ կան. արդ այսու ուխտիս յանձնարարութիւն և անդորրութիւն լոյսի 'ի մէջ Քրիստոնէից և Մուսլիմանաց մշանջենաւոր. և հաւատարմացուցեալ է առ այն ինչ իրս, զորս ես ետուս նոցա զբաւարթ դիմաք և հաճութեամբ կամաց. և սիրելի է ինձ վարիլն այսու դաշամբ՝ ցորքան ժողովուրդք նոցա կացցեն և 'ի հպատակութենէ մի ելանիցեն. եւ դարձուցեն զինքեանս յամենայն ատելութեանց և չարեաց առ կրօնն ազգին իմոյ. զի եթէ կացցեն նոքա հաստատուն 'ի վերայ ուխտի իւրեանց. նմանեալք լիցին Մուսլիմանաց և Մուսլինաց։ Արդ յանդիման կացուցի ես զիշխանս Մուսլիմանաց և զաղնուագոյն դպիրս իմ. և հաստատեցի զուխտս իմ. զոր Ազգն Քրիստոնէից յինէն խնդրեցին ստանալ. և գրեցի զդաշինս վասն նոցա առ 'ի մնալոյ զկնի նոցա. զի եթէ թագաւոր կամ իշխան կամ այլ որ նեղեսցէ և տառապեցուսցէ զնոսա, նոքա ցուցցեն զայս գիր ուխտի իմոյ. քանզի առաւելապէս թագաւորաց և ամենայն Մուսլիմանաց է պարտաւորութիւն առնել ըստ հրամանի մերոյ. որպէս զի գործովք հաւատարմութեան կատարեսցեն զհրամանս մեր և պայծառացուսցեն զուխտս մեր և արասցեն զհաճոյս մեր ըստ դաշինս՝ զորս ես ընդ նոսա եդեալ եմ, զի մի լոյսի անհնազանդութիւն բարուց ըստ հրամանի և պատուիրանի իմոյ. և հարկաւոր է ոչ նեղել և ոչ առել զքրիստոնեայս. որպէս զի այնու արարողութեամբ լցին կատարիչք ուխտիս մերոյ և դաշնադրութեան։

Որովհետեւ այս ուխտ իմ բեռն է և պարտաւորութիւն ընդունողացն և զայրացուցիչ է նախանձողացն և զրախոսից. վասն որոյ կամիմ զի մի լոյսի վիճումն քրիստոնէից ընդ ազգին իմոյ իշխանութեամբ փառաւորելոյ։ Իսկ եթէ որ նենդիցէ գրելոցն յինէն վասն քրիստոնէից՝ որք արժանաւոր գտան այցելութեան, այնպիսին պատճառ լինի խափանման Աստուածային հրամանի, որ ազգեաց ինձ առնել բարեբարութիւն ազգին այնմիկ և փրկել յամենայն տառապանաց և վշտաց։ Եւ արդ այսու ուխտեցի ընդ նոսա՝ որք խնդրեցին և հայցեցին յինէն և յամենայն բարեկամաց իմոց. և ետուս նոցա ուխտ Աստուածային, նահապետաց. Մարգարէից և ամենայն սրբոց յառաջնոցն մինչեւ ցվերջինն. և վկայէ ինձ հրամանն և բանն Աստուծոյ առ սուրբ մարգարէսն. առաքեալ 'ի ձեռն հրեշտակի վասն հնազանդութեան օրինաց և կատարման պարտուց, եւս և հաւատարիմ մնալոյ 'ի վերայ Աստուածային ուխտիս։

Քանզի Քրիստոնեայք ընդ իշխանութեամբ իմովք ժողովուրդ իմ են. և ես իշխան եմ 'ի վերայ նոցա, ուրեմն հարկ է ինձ այդ առնել նոցա. և պահել զնոսա յամենայն չարեաց և 'ի վշտաց. և վարձ բարի մնասցեն ինձ և ազգին իմոյ՝ որք սփռեալ կան ընդ ամենայն տիեզերաց։

Եւ զոր ինչ հարկ սահմանեալ է իմ տալ իշխանացն՝ աւելի քան զայն մի առնուցուն. և մի որ վշտացուսցէ եւ նեղեսցէ զնոսա, մի որ փոխեսցէ զաշխարհս նոցա. ոչ զկրօնաւորն 'ի կը-

digitised by A.R.A.R.@

թենաւորութենէ, ոչ զքրիստոնեայն 'ի քրիստոնէութենէ, ոչ զմիայնակեացն 'ի միայնակեցութենէ և 'ի մենաստանաց իւրեանց, մի արգելցեն զքարոզիչս և զքարոզութիւնս նոցա. և մի աւերեսցեն զնակարանս և զդաւառս նոցա. և մի մերձեսցին ընչից նոցա 'ի ժամ կառուցման եկեղեցեաց. մի խլեսցեն բառնալ զկոչնակս յեկեղեցեաց նոցա։ Այժմէն հաստատեսցի զարարկարգութիւնս մնալ վասն նոցա. զոր աւերեսցեն զուխտն իմ և նենգեսցեն՝ անցանելով զպատուիրանաւ իմով, այնպիսիքն կրծատեսցեն զուխտն Աստուածային և արժանի լինին մշանջենաւոր պատժոյ։

Թագաւոր կամ այլ ոք յազգէն Մուսլիմանաց կամ բարեկրօնից՝ բնութեամբ զքրիստոնեայս մի դարձուցեն 'ի կրօնս Մուսլիմանաց և մի վերձեսցեն ընդ նոսա 'ի վերայ իրացն հաւատոյ, եթէ ոչ քաղցրութեամբ և հանդարտութեամբ պահեսցեն զնոսա ընդ հովանեաւ ողորմածութեան իւրեանց, փրկելով զնոսա յամենայն տառապանաց և 'ի վշտաց. ուր ուրեք երեւեսցին և բնակեսցին նոքա։ Եւ եթէ ազգն նոցա հպատակեալ՝ կարօտասցի ընչից վասն շինութեան եկեղեցեաց. մենաստանաց քաղաքական խորհրդոց. վասն գաւառաց և տանց իւրեանց, Մուսլիմանք պարտին օգնել նոցա և այց առնել. տալով նոցա մասն ինչ յանժառանգ ընչից, և այն եւս ոչ ըստ կերպի պարտուց, այլ ըստ կերպի ողորմութեան. և տացեն նոցա խորհուրդ բարի 'ի գործառնութիւնս նոցա, զի այն է հաճոյ առաջի Աստուծոյ և առաջի մարգարէի նորին։ Իսկ եթէ ոք նենգեսցէ և այլայլեսցէ զայս ուխտ իմ. այնպիսին անհաւատ է և ապստամբ լինի յԱստուածային մարգարէէն և զրկեսցի յարդեանց նորա. և մարգարէն ընդ նա ոչ հաճեսցի. զի որք ոչ իցեն հաւատարիմք և հնազանդք ուխտս զոր հաստատեալ է իմ, այնպիսիքն զիարդ լինին հնազանդք Սրբոյն Սրբոց որդւոյն Ապիթալեպայ փառաւորելոյն. քանզի զոր ինչ նա կարգաւորեալ է՝ պարտական թիւն Մուսլիմանաց է կատարել. այց առնելով նոցա և ողորմիլ նոցա յամենայն ժամանակ՝ որքան տեւեսցէ աշխարհս մինչեւ 'ի կատարած աշխարհի։ Եւ փառք Արարողին տիեզերաց։

---

## ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

### ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

---

«Արեցէք զմիմեանս. ասէ Յիսուս Քրիստոս, և այսու ծանիցիք թէ աշակերտք իմ էք»։

Մեր հաստատելիք սակաւաթիւ սկզբունքն բաւական են մարդկային սերի Կրօնին. տիեզերք այս կրօնին տաճարն է, ուր ամեն պաշտամունքներ ընդունուած են, ուր պէս պէս ծէսերուն զանազան արարողութեանց ամեն ժողովրդոց հաւատոյ եւ վարդապետութեան մէջէն Աւետարանը իւր ջինջ նշոյլները կը ճառագայթէ։

Վարդապետութեան մէջ միութիւնը՝ մարդկային զարմին յառաջադիմութեան ճախող փառասիրութիւնն է միայն։ Բարոյականին մէջ միութիւնը երկրիս վերայ եղող բոլոր ժողովրդոց խաղաղասէր քաղաքակրթութիւնն է։ Ուրեմն Տիեզերական կրօնք մը հիմնելու դաղափարին մէջ բնաւ պատրանք մը չը

digitised by A.R.A.R.@